

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Դալարիկ գյուղական համայնքի ղեկավարի (2014 թվական)

2014թ.-ի ընթացքում Դալարիկ գյուղական համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Գյուղապետարանը բնակիչներից ստացել է 145 դիմում, ինչպես նաև բանավոր հարցումներ, որոնք քննարկվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ: Գյուղապետարանը բնակիչներին տվել է 460 տեղեկանք , ստացել 70 պաշտոնական նամակ և գրություն, որոնք քննարկվել են և սահմանված ժամկետներում տրվել պատասխաններ:

- 2014թ.-ի ընթացքում կազմակերպվել է համայնքի վարչական տարածքում սանձաքրման աշխատանքներ, որոնք կրել են պարբերական բնույթ՝ մաքրվել են ոռոգման առուները, փողոցները, բազմահարկ շենքերի բակերը, սպորտ-հրապարակի տարածքը, մանկապարտեզի, երաժշտական դպրոցի, համայնքի վարչական տարածքով անցնող Երևան-Գյումրի մայրուղու և երկաթգծի տարածքները: Համայնքի փողոցների մի մասում անցկացվել է ցերեկային լուսավորություն: Կատարվել է փողոցների բարեկարգում:

-Նախագինակոչային տարիքի պատանիներից 38-ը ներկայացել են Արմավիրի Զինկոմ, զինակոչը գտնվում է դրական ընթացքի մեջ:

- Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափազանցման և սահմանների ճշտորոտման աշխատանքներ:

- Ցրտահարությունից տուժած քաղաքացիներին տրվել է պարարտանյութ և դիզ. վառելիք, գիջվել է հողի հարկը:

- Ցրտահարության վնասները մասամբ վերականգնելու համար համայնքի ղեկավարի աջակցությամբ վերադասից ստացվել և ժողովրդին է բաժանվել տարբեր տեսակի սերմեր՝ նոր ցանքս և սածիլավորում կատարելու համար:

- Համայնքի տարածքում կատարվել է խմելու ջրի ջրագծի վերանորոգման աշխատանքներ և շատ մասերում տեղադրվել է ջրաչափ սարքավորումներ, խմելաջրի քլորացման հարցը լուծվում է ժամանակին: Կատարվել է

բնակչության տնտեսություններում անասունների հաշվառման աշխատանքներ և հաշվետվություն ներկայացվել վիճակագրական ծառայություն:

- 2014թ.-ի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝

- ա) հողի հարկ - 7460.8 հազար դրամ,
- բ) գույքահարկ – 3554.7 հազար դրամ,
- գ) տեղական տուրք – 430.2 հազար դրամ,
- դ) պաշտոնական դրամաշնորհի – 61882.5 հազար դրամ,
- ե) ընթացիկ սուբվենցիա - 680.7 հազար դրամ,

- Համայնքում իրականացվել են մի շարք սոցիալ-տնտեսական միջոցառումներ և ծրագրեր, գյուղապետարանի աշխատակազմը համայնքի ղեկավարի ղեկավարությամբ աջակցել է աշնանացան ցորենի և գարնանացան գարու բերքահավաքի աշխատանքներին.

ա) Իրականացվել է գյուղապետարանի վարչական շենքի գազաֆիկացման աշխատանքներ՝ 840.0 հազար դրամ:

բ) Կատարվել գյուղապետարանի վարչական շենքի կապիտալ վերանորոգման աշխատանքներ՝ 9605.7 հազար դրամ

գ) Իրականացվել է ներհամայնքային ճանապարհների ընթացիկ նորոգման՝ գրունտով հարթեցման աշխատանքներ՝ 640.0 հազար դրամ:

ա) համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին, տարեց կանանց, հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին, արցախյան պատերազմի մասնակիցներին, հաշմանդամներին տրվել է դրամական օգնություն 5800.0 հազար դրամ,

բ) աղբահանման՝ աշխատանքների կազմակերպման համար հատկացվել է 1600.0 հազար դրամ,

գ) 11421.5 հազար դրամ ծախսվել է համայնքում նախադպրոցական կրթության հաստատությունում աշխատանքների պատշաճ կազմակերպման համար:

դ) 7537.3 հազար դրամ ծախսվել է համայնքում արտադպրոցական դաստիարակության հաստատությունում (երաժշտական դպրոց) աշխատանքների պատշաճ կազմակերպման համար:

- Համայնքի մշակութային միջոցառումների կազմակերպման համար ծախսվել է 1430.0 հազար դրամ:

- Մշակույթի տունը գործում է, սակայն շենքը վերանորոգման խիստ կարիք ունի:
- Համայնքը խիստ կարիք ունի գյուղամիջյան ճանապարհների վերանորոգման:
- Համայնքի 19 բազմաբնակարանային շենքերի կտուրները ունեն կապիտալ վերանորոգման խիստ կարիք:

Դալարիկ համայնքի ղեկավար



Պ. Սաղաթեյան